

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
28.03.2019թ. թիվ 4/2-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահ՝
Արա Զոհրաբյան

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

I. Որակավորման քննությունների առաջին փուլի ստուգման և գնահատման չափանիշներ

1. Քաղաքացիաիրավական ուղղվածության՝ հայցադիմումի ստուգման և գնահատման չափանիշներն են (առավելագույն միավորը՝ 20, անցողիկը՝ 12)՝

- 1) Հայցադիմումին ներկայացվող ձևական պահանջներ՝ մինչև 2 (երկու) միավոր.
- 2) Նկարագրական մաս (փաստերի ընտրություն)՝ մինչև 5 (հինգ) միավոր, որից յուրաքանչյուր ավել ընտրած և վեճի համար էական նշանակություն չունեցող փաստի համար նվազեցվում է 0,5 միավոր (2 միավորից ոչ ավել), յուրաքանչյուր չընտրած և վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի համար նվազեցվում է 1 միավոր (3 միավորից ոչ ավել).
- 3) Պատճառաբանական մաս՝ մինչև 9 (ինը) միավոր, որից՝ ա) յուրաքանչյուր ավելորդ (վեճի լուծման հետ ուղղակիորեն կապ չունեցող) վկայակոչված իրավական նորմի և/կամ պատճառաբանության համար նվազեցվում է 0,5 միավոր (1 միավորից ոչ ավել), բ) սխալ վկայակոչված (գործի փաստերի նկատմամբ ոչ կիրառելի) իրավական նորմի և/կամ պատճառաբանության համար նվազեցվում է 1 միավոր (2 միավորից ոչ ավել), իսկ գ) չվկայակոչված (անհրաժեշտ և կիրառելի) իրավական նորմի (նորմերի) կամ ճիշտ վկայակոչված նորմի (նորմերի) թերի կամ սխալ պատճառաբանության համար նվազեցվում է մինչև 6 (վեց) միավոր.
- 4) Եզրափակիչ մաս՝ մինչև 4 (չորս) միավոր:

2. Քրեաիրավական ուղղվածության՝ դատավճռի դեմ ներկայացվող վերաքննիչ բողոքի գնահատման չափանիշներն են (առավելագույն միավորը՝ 20, անցողիկը՝ 12)՝

- 1) Վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջներ՝ մինչև 2 (երկու) միավոր.

- 2) **Վերաքննիչ բողոքի հիմք և հիմնավորումներ**, այդ թվում՝ դատական սխալի վերհանում, նյութական և/կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև հիմնավորվածություն և պատճառաբանություն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի վերլուծություն և համադրում գործի փաստերի հետ, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորում և տրամաբանական կապ ներկայացված պահանջի հետ՝ **մինչև 16 (տասնվեց)** միավոր (սույն չափանիշով գնահատման համար հաշվի է առնվելու նաև ոչ էական նորմերի և/կամ փաստերի վկայակոչումը)։
- 3) **Վերաքննիչ բողոքի պահանջ (խնդրամաս)՝ մինչև 2 (երկու) միավոր**։

II. Որակավորման քննությունների երկրորդ փուլի գնահատման չափանիշներ (յուրաքանչյուր հարցի մասով առավելագույն միավորը 20, անցողիկ միավորը՝ 12)

3. Քաղաքացիաիրավական և քրեաիրավական ուղղվածության՝ դեռնթուլոգիայի հարցի գնահատման չափանիշներն են՝

- 1) խնդրի արդյունավետ լուծում գտնելու ունակությունը (վերաբերելի վարքագծի կանոնի բովանդակության բացահայտում)՝ **մինչև 4 միավոր**։
- 2) խնդրի լուծման պատճառաբանվածությունը (փաստերի և կանոնի կիրառման գործընթացի կապակցությամբ հավակնորդի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները)՝ **մինչև 10 միավոր**։
- 3) հարցերին պատասխանելու ժամանակ արագ ընկալելու և կողմնորոշվելու ունակությունը՝ **մինչև 3 միավոր**։
- 4) բանավոր համոզիչ խոսքը՝ **մինչև 3 միավոր**։

4. Քաղաքացիաիրավական ուղղվածության իրավիճակային խնդրի գնահատման չափանիշներն են՝

- 1) խնդրի արդյունավետ լուծում գտնելու ունակությունը (խախտված իրավունքի և պաշտպանության եղանակի ընտրություն)՝ **մինչև 4 միավոր**։
- 2) խնդրի լուծման պատճառաբանվածությունը (փաստերի և կանոնի կիրառման գործընթացի կապակցությամբ հավակնորդի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները)՝ **մինչև 10 միավոր**։
- 3) հարցերին պատասխանելու ժամանակ արագ ընկալելու և կողմնորոշվելու ունակությունը՝ **մինչև 3 միավոր**։
- 4) բանավոր համոզիչ խոսքը՝ **մինչև 3 միավոր**։

5. Քրեաիրավական ուղղվածության իրավիճակային խնդրի գնահատման չափանիշներն են՝

- 1) խնդրի արդյունավետ լուծում գտնելու ունակությունը (արարքի որակումը և/կամ արդյունավետ պաշտպանության եղանակի ընտրությունը)՝ **մինչև 4 միավոր**.
- 2) խնդրի լուծման պատճառաբանվածությունը (փաստերի և կանոնի կիրառման գործընթացի կապակցությամբ հավակնորդի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները)՝ **մինչև 10 միավոր**.
- 3) հարցերին պատասխանելու ժամանակ արագ ընկալելու և կողմնորոշվելու ունակությունը՝ **մինչև 3 միավոր**.
- 4) բանավոր համոզիչ խոսքը՝ **մինչև 3 միավոր**:

III. Եզրափակիչ և անցումային դրույթներ

6. Որակավորման քննության ստուգման և գնահատման սույն չափանիշները սահմանված են «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Կարգի 11-րդ, 90-րդ և 104-րդ կետերի պահանջների համաձայն:

7. 2019 թվականի գարնանը և աշնանը կազմակերպվող որակավորման քննությունների երկրորդ փուլի քննության ժամանակ հավակնորդների բանավոր համոզիչ խոսքի համար նախատեսված դեռնթուլոգիայի և իրավիճակային խնդիրների 3-ական (ընդհանուր 24 միավորից՝ 6 միավորը) միավորները հաշվարկվում են հավակնորդների օգտին: